ՏԵՔՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Տեքստը կարևոր ուսումնական նյութ է:

Բոլոր ուսումնական առարկաների ուսումնասիրման ընթացքում սովորողները ձեռք են բերում տեքստերի հետ աշխատելու հմտություններ: Կարևոր է, որ ուսուցիչները սովորողների հետ միասին սահմանեն տեքստի առաջադրանքների գնահատման հստակ չափանիշներ, որոնք կօգնեն սովորողներին ստույգ պատկերացում կազմել, թե ինչն է գնահատվելու և ինչպես, այնուհետև քննարկման արդյունքում պլանավորել իրենց հետագա ուսումնական գործունեությունը:

Չափանիշների վրա հիմնված գնահատումը հնարավորություն է տալիս իրականացնելու արդյունավետ ձևավորող գնահատում, որի արդյունքում սովորողը ձեռք է բերում տարբեր հմտություններ:

Ստորև ներկայացված ինքնագնահատման թեստը կարելի է կիրառել տարբեր տեքստերի հետ աշխատելու ընթացքում:

Ինքնագնահատման թեստի կետերի դիմաց համապատասխան նշումներ կատարելուց հետո սովորողը ստորև ներկայացված 10 ամպիկներում համապատասխանաբար լրացնում կամ ընդգծում է (կարողություններին համապատասխան) այն պատասխանները, որոնք գիտի և ինչ ինքը կարող է, որից հետո սովորողի համար պարզ են դառնում և՛ իր ուժեղ կողմերը, և այն հմտությունները, որոնք պետք է բարելավի ու զարգացնի ուսուցման և ուսումնառության ընթացքում:

Սովորողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ուսուցիչը կարող է ներկայացված 10 կետերի բովանդակությունը պարզեցնել կամ բարդացնել:

Ինքնագնահատման թեստ

Կարդա՛ ու գնահատի՛ր քո հմտությունները տրված չափանիշներով
(Յուրաքանչյուր կետի համապատասխան վանդակում նշել պատասխանը՝ օգտագործելով ստորև ներկայացված նշանային համակարգը):

+ կարող եմ
V լավ չեմ կարող (միշտ չէ, որ կարող եմ, մասամբ կարող եմ)
? վստահ չեմ, որ կարող եմ
– չեմ կարող

1. Արագ կարդալ տեքստը և գտնել պահանջվող տեղեկատվությունը: •
2. Հասկանալ պարզ, հստակ ձևակերպված հարցը: •
3. Հասկանալ հարցը, նույնիսկ եթե այնտեղ օգտագործվում են տեքստում առկա բառերի հոմանիշները: •
4. Պարզաբանել, հասկանալ բառի իմաստը: •
5. Տեքստից դուրս գրել հոմանիշները: •
6. Տեքստից դուրս գրել հականիշները: •
7. Հայտնել և հիմնավորել կարծիք տեքստի կարևոր մտքի մասին: •

8. Պատասխանել տեքստի շուրջ հարցերին՝ օգտագործելով այլ առարկաներից ստացած գիտելիքները: •
9. Ինքնուրույն պատասխանել տեքստի շուրջ հարցերին: •
10. Հասկանալ տեքստի հիմնական գաղափարը, որը ներկայացված է նկարի կամ գծապատկերի տեսքով: •

«Ամպիկներ»

Լրացրու՛ ամպիկները կամ ընդգծի՛ր ճիշտ տարբերակը:

Օրինակ՝

✔ Արագ կարդալ տեքստը և գտնել պահանջվող տեղեկատվությունը



կամ

✔ Կարդալ տեքստը վանկերով:
✔ Կարդալ տեքստում ընդգծված բառերը:
✔ Կարդալ տեքստում ընդգծված բառակապակցությունները:
✔ Հուշող հարցերի միջոցով գտնել և ընդգծել պահանջվող տեղեկատվությունը:

կամ

✔ Կարդալ տեքստը վանկերով:
✔ Կարդալ տեքստում ընդգծված բառերը:
✔ Կարդալ տեքստում ընդգծված բառակապակցությունները:
✔ Հուշող հարցերի միջոցով գտնել և ընդգծել պահանջվող տեղեկատվությունը:

կամ

✔ Ուսուցչի կամ դասընկերոջ օգնությամբ հասկանալ պարզ ձևակերպված հարցը:
✔ Հասկանալ պարզ ձևակերպված հարցը նկարի մասին:
✔ Հասկանալ պարզ ձևակերպված հարցը, մի քանի անգամ կրկնելուց հետո:

կամ

✔ Ուսուցչի կամ դասընկերոջ օգնությամբ հասկանալ հարցը, որտեղ օգտագործվում են տեքստում առկա բառերի հոմանիշները:
✔ Հասկանալ հարցը մի քանի օրինակներից հետո:
✔ Հասկանալ հարցը շատ պարզեցնելուց հետո:

կամ

✔ Նկարների օգնությամբ հասկանալ բառի իմաստը:
✔ Հասկանալ տեքստում ընդգծված բառի իմաստը:
✔ Հասկանալ պարզ բառի իմաստը:

✔ Հուշող հարցերի միջոցով տեքստից դուրս գրել հոմանիշները:

կամ

✔ Բառարանից օգտվելով՝ տեքստից դուրս գրել հոմանիշները:
✔ Տեքստից դուրս գրել ընդգծված հոմանիշները:

կամ

✔ Հուշող հարցերի միջոցով տեքստից դուրս գրել հականիշները:
✔ Բառարանից օգտվելով տեքստից դուրս գրել հականիշները:
✔ Տեքստից դուրս գրել ընդգծված հականիշները:

կամ

✔ Ուսուցչի կամ դասընկերոջ օգնությամբ ընդգծել տեքստի կարևոր միտքն արտահայտող նախադասությունները:
✔ Կարդալ տեքստի կարևոր միտքն արտահայտող նախադասությունները:
✔ Ուսուցչի կամ դասընկերոջ օգնությամբ հայտնել կարծիք տեքստի կարևոր մտքի մասին:
✔ Արտագրել տեքստի կարևոր միտք արտահայտող նախադասությունները:

կամ

✔ Մի քանի օրինակներից հետո հարցերին պատասխանելիս օգտագործել այլ առարկաներից ստացած գիտելիքները:
✔ Ուսուցչի կամ դասընկերոջ օգնությամբ հարցերին պատասխանելիս օգտագործել այլ առարկաներից ստացած գիտելիքները:
✔ Հուշող հարցերի միջոցով պատասխանել ինչ գիտելիքներ եմ ստանում այլ առարկաներից:

կամ

✔ Հարցերի պատասխաններն ընդգծել տեքստում:
✔ Ինքնուրույն պատասխանել պարզ ձևակերպված հարցերին:
✔ Պատասխանել հարցերին ուսուցչի կամ դասընկերոջ օգնությամբ:
✔ Պատասխանել հարցերին նկարների միջոցով:

կամ

✔ Նկարների միջոցով հասկանալ տեքստի հիմնական գաղափարը:
✔ Ուսուցչի կամ դասընկերոջ օգնությամբ գծապատկերի միջոցով հասկանալ տեքստի հիմնական գաղափարը:
✔ Հուշող հարցերի միջոցով հասկանալ տեքստի հիմնական գաղափարը:

Կազմեց Հասմիկ Հովհաննիսյանը